ՀՀ ԿԳՄՄՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Տնօրինական խորհրդի

նախագահ Ք. Աբրահամյան

«09» 01 2024 թ.

(ստորագրություն)

ՀԻՄՆԱԿԱՆ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԻՄՔԵՐ

Դասախոսական կազմը համարվում է Քոլեջի կարևորագույն ռեսուրսը, ինչով պայմանավորված է աշխատանքի արդյունավետությունը, հնարավորությունները և զարգացման հեռանկարները: Դասախոսական կազմի կայունության ապահովումը ԵՊՏՔ-ի կադրային քաղաքականության նպատակն է սահմանել աշխատակիցների ներգրավման և կայունության ապահովման սկզբունքները և հիմնախնդիրները: ԵՊՏՔ-ի ռազմավարական նպատակների ձեռքբերման հարցում գերակա դեր է խաղում դասախոսական կազմի ներգրավումը գիտակրթական գործընթացներում և դրանց կայունության ապահովումը: Քոլեջի դասախոսական կազմի ներգրավումը և կայունության ապահովումը հիմնված է հետևյալ հիմնական սկզբունքների վրա՝

- որակյալ մասնագետների ընդունում և ներգրավում Քոլեջի կրթական գործընթացներում,
- անձնակազմի արդյունավետ կառավարում՝ կողմնորոշված և մոտիվացված աշխատակիցներով ապահովելու համար,
- անձնակազմի խրախուսում (նյութական, բարոյական, և այլն)՝ աշխատանքի արդյունավետության ապահովման համար,
- աշխատակազմի զարգացման հնարավորության և աշխատակազմի կայունության ապահովում,
- կադրային կայունության ապահովման գլխավոր նպատակն է ԵՊՏՔ-ի աշխատակիցների զարգացման համար պայմանների ստեղծումը և կադրային դինամիկայի ապահովումը:

Քոլեջի կադրային կայունության ապահովման խնդիրներն են՝

- կադրերի համալրման համր թեկնածուների բացահայտումը և կադրային ռեզերվի ապահովումը,
- անձնակազմի ընտրության պլանավորումը,
- Քոլեջի կադրերի աշխատանքի խթանման համակարգի ստեղծումը և զարգացումը,
- կարիերայի զարգացման թափանցիկ համակարգի ամրապնդումը և զարգացումը,
- կադրերի վերապատրաստման համակարգի ամրապնդումը և զարգացումը:

Կայունության ապահովման հիմնական գործընթացներն են՝

- որակյալ մասնագետների ներհոսքի և կադրային ռեզերվի ապահովման միջոցով,
- Քոլեջի կադրերի կայունության ապահովում՝ Քոլեջի կադրերի մասնագիտական առաջընթացի ապահովման միջոցով,
- Քոլեջի կադրերի կայունության ապահովուն՝ կադրերի սոցիալական վիճակի բարելավման միջոցով,
- մասնագիտական որակների կատարելագործում՝ պարբերաբար գնահատման և վերապատրաստման միջոցով:

Քոլեջի դասախոսական կազմի ներգրավման և կայունության ապահովման համար պատասխանատվություն են կրում՝

- Քոլեջի տնօրենը,
- Ուսումնական աշխատանքների գծով փոխտնօրենը,
- Ամբիոնի վարիչը,
- Հանձնաժողովի կազմում ընդգրկված մասնագետ դասախոսը,
- Կադրերի վարիչը: